



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հոկտեմբերի 2014 թվականի N 1212 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 986 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 17-ի «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 986 որոշմամբ հաստատված՝ բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկման ու վճարման կարգում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) 3-րդ կետի «ա» ենթակետը «Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ու իրացվող» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն ներմուծված և իրացվող» բառերով.

2) 4-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարող անձինք (այսուհետ՝ վճար վճարողներ) մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները՝

ա) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչություն գրանցման են ներկայացնում՝

- վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու համար,

- արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար,

- շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրության և իրացման, Հայաստանի Հանրապետություն շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման և իրացման համար,

- մակերևութային ջրերի օգտագործման համար,

- ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների համար,

- կենսապաշարների օգտագործման համար.

բ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչություն գրանցման են ներկայացնում՝

- պինդ օգտակար հանածոների (բացառությամբ մետաղական օգտակար հանածոների) մարված պաշարների, հանքային ջրերի, աղի արդյունահանված պաշարների համար:

Սույն կետով սահմանված կարգով գրանցված հաշվարկ-հաշվետվությունները սույն կետում նշված ժամկետին հաջորդող 5 օրվա ընթացքում ներկայացվում են հարկային մարմին:

Բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների կողմից համապատասխան վճարի գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշտման արդյունքներով ճշտված հաշվարկ-հաշվետվությունները օրենքով սահմանված դեպքերում ներկայացվում են սույն կետով սահմանված կարգով:».

3) 5-րդ կետի □ա□ ենթակետը □ապրանքներ ներմուծողների համար□ բառերից հետո լրացնել □՝ բացառությամբ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ ներմուծող- իրացնողների□ բառերով.

4) 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն կետով նախատեսված ցանկերի ձևերը հաստատվում են Հայաստանի Հանրա- պետության ֆինանսների նախարարի ու Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի կամ Հայաստանի Հանրապետության բնապահպանու- թյան նախարարի համատեղ հրամաններով՝ նրանց լիազորությունների շրջանակներում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2014 թ. նոյեմբերի 10
Երևան



Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ